

ԽՈՒՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՐԱԿԱՆ

S. ՏԱԹԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԿՈՐՅԱՆ

«ՄԱՇՏՈՅԻ»՝ ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՅՈՒ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՆԱՅԿԱԿԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 350 - ԱՄՅԱԿՆ)

Ոսկանյան հրապարակությունների շարքում իր կարևորությամբ առանձնակի տեղ է գրավում «Մաշտոց» ծխարանի 1667 թ. իրականացված հրապարակությունը¹: Գրքավեսարի տեսանկյունից այն չունի ամստերդամյան նախորդ հրապարակությունների՝ «Յիսուս Որդիի», «Շարակնոցի» և վերջապես «Աստվածաշնչի» հարուստ փորագրանկարները և տառագարդերը ու ինչ-որ տեղ կարող է անգամ նախանջ դիտվել տպագրական առումով, սակայն այս հանգամանքը պայմանավորված է հայ ձեռագրային ավանդույթով: Ընդունված կարգով պատկերագրող և շքեղ ձևավորված էին լինում Շարակնոցները, որ նշանակալից տոների կանոններին կից բերվում էին տվյալ թեմաներով մանրանկարներ, իսկ Աստվածաշունչը նկարագրված էր լինում Տին և Նոր Կտակարանների թեմաներով, Տերունական պատկերներով և տերթոյային մանրանկարներով ու լուսանցագրերով: Մաշտոցները, սակայն, իրենց գերակշիռ մեծամասնությամբ նման ձևավորումներ չունեն, այլ միայն կանոնների գլխաբաժանումներ և մեկ երկու մանրանկարներ, որոնք դրվում են Մկրտության, Պատկի և Ձեռնադրության կանոններին կից: Այսպիսով, եթե Մաշտոցի Ոսկանի հրապարակությունը համեմատենք ձեռագիր Մաշտոցների հետ, ապա կրկնենք, որ այս հրապարակությունը ոչ թե անշուք է, այլ Մաշտոց ժողովածուի ձեռագրային ավանդույթի շարունակությունն է հայ գրքավեսարում՝ մկրտության տեսարանին կից Նորդանանում մկրտության պատկերով, կանոնների ճակարագրողային բաժանումը հիշեցնող գլխաբաժանումը և լուսանցագրերով:

Ոսկանը հարազատորեն է ներկայացրել հայ ձեռագրային ավանդույթին բնորոշ եւս մեկ առանձնահատկություն. այն է՝ կանոններից առաջինը ներկայացնել շքեղ ձևավորված կիսախորանի, իսկ մյուսները՝ նախազարդ ճակարագրողների ներքո:

Այս հրապարակությունում կիսախորանի ներքո բերված է առաջին՝ Մկրտության կանոնը, իսկ նրան կից՝ Նորդանանում մկրտության փորագրանկարը, որը, ինչպես ամստերդամյան մյուս հրապարակություններում, պատկանում է Բրիտանիկ վան Զիխսեմի փորագրանկարների շարքին:

Ոսկանն ինչպես որ «Շարակնոցում» յուրաքանչյուր փորագրանկարի ներքո բերում էր

1 «Գիրք Սրբյան Մաշտոցայ վարդապետի», Ամստերդամ, 1667, 315 էջ: Այս գրքի մանրամասն նկարագրությունը տես Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Մավադյան, Նայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 52:

այդ պարկերի հոգևոր խորհուրդը վեր հանող չափածո մի քանի պոեզիա, այնպես այսպիսի Մկրտության խորհրդին համահունչ ձևով գրում է.

Որ ի կուսեն ըստ Եսայեայ մարմնով ծնար,
Եւ ի մոգուց պարարագօք մեծարեցար,
Ի Յոհաննու ի Յորդանան մկրտեցար
Եւ ձայնիւ Նոր Տէր և Աստուած վկայեցար:

«Կույսից,-ըստ Եսայու կանխասացության,-մարմնով ծնվեցիր» խոսքերով նկարի ունի մարգարեի «Ահա կոյսն յղացի» (Է 14) պոեզիա, իսկ Նայրական ձայնի մասին խոսքերը վերցված են Մկրտության մասին ավերարանական հարվածից. «Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մարթ. Գ 17):

Ոսկանի այս հրապարակությունը, լինելով Մաշտոցի երկրորդ քաղաքությունը հայ գրքի պարմության մեջ, ըստ էության, սակայն, առաջինն է, քանի որ նախորդը, որը լույս է տեսել Աբգար դպիր Թ-իսաթեցու կողմից, թե՛ իր հնության և թե՛ ըստ երևույթին սահմանափակ քաղաքական պարճառով գործնականում հայրնի չի եղել: Պարահական չէ, որ այս հրապարակությունից թերի մեկ օրինակ պահպանվել է Երևանի Մարենադարանում և այն է՝ ձեռագրով լրացված, որի համար գրվում է ձեռագրերի բաժնում, իսկ Նայասարանից դուրս մեկական օրինակներ պահպանվել են Ս. Ղազարի հավաքածուում և Նոմի Վափկանի գրադարանում:

Ինչպես ցույց են տալիս Ոսկանի հրապարակությանը նախորդող շրջանի ձեռագիր Մաշտոցները, այս ժողովածուն անվանվել է «Գիրքս, որ է Մաշտոց» (Ս. Ղազարի Թ- Մաշտոց՝ ԺԳ- կամ ԺԴ դ.)², «Տառս որ է Մաշտոց»³ (Երևանի Մարենադարան, ձեռ. հմ. 1025, 1636 թ.) և համանման ձևերով: Միաժամանակ, հայ մարենագրական ընդհանրացած ավանդույթով ասվում է, որ այս ժողովածուի առաջին ամբողջացումը եղել է Մեսրոպ Մաշտոցը: Այս ըմբռնումը եւս արագացվել է Մաշտոց ծխարանին փոխված բնորոշումներում: Այսպես, 1547 թ. գրված և այժմ Երևանի Մարենադարանում պահվող հմ. 1034 ձեռագրի հիշարակարանում Մաշտոց եղող այդ ձեռագրի համար ասվում է. «Եւ կոչի անուն սորա Մաշթոց, վասն այսորիկ արար սուրբն երանաշնորհ և երանելին Մաշթոց վարդապետն»⁴:

Այս ըմբռնումը իր հրապարակված Մաշտոցի վերնագրում Ոսկան վարդապետը միանգամից արքայապետ է այսպես «Գիրք Սրբոյն Մաշտոցայ վարդապետի»: Այս վերնագրով են լույս տեսել ոչ միայն Ոսկանյան քաղաքանի հեղ հարաբերվող Մաշտոցի 1676 թ. Մարտիկի և Զմյուռնիայի հրապարակությունները⁵, այլև Աստվածատուր Կ. Պոլսեցու՝ Կ. Պոլսի 1704⁶ և 1714 թթ. հրապարակությունները⁷, որով Մաշտոց ծխարանի հայ ձեռագրային

2 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մարենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հր. Գ., «Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց», աշխ. Ն. Բ. Սարգիսյանի և Ն. Գ. Սարգիսյանի, Ս. Ղազար, էջ 1966:

3 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց», հր. Դ., աշխ. Ա. Քյոշկերյանի, Կ. Սուքիասյանի, Ն. Քյոշկերյանի, Եր., 2008, էջ 98:

4 Անդ, էջ 137:

5 «Նայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 76, 78:

6 Անդ, էջ 150:

7 Անդ, էջ 206:

ավանդները Ոսկանը փոխադրում է Կապույտ Մաշտոցները, և այս ավանդները շարունակվում են նաև իրենից հետո:

Ասվածը վերաբերվում է և այս հրապարակությունում Կապույտ Մաշտոցներին: Վերջիններիս բնությունը վկայում է, որ Ոսկանն իր առջև նպատակ է դրել հրապարակել եկեղեցական ամենօրյա արարողությունների համար անհրաժեշտ Մաշտոց, և այսպիսով գերազանցել էն բացառապես քահանայի կողմից կիրառվող եկեղեցական-ժողովրդական ամենագործածական կանոնները, եպիսկոպոսական ոչ մի կանոն չկա:

Ասվածաբանությունը Կապույտ Մաշտոցներին հիշյալ երկու հրապարակություններում թեև որոշ չափով ընդլայնվել է կանոնների շրջանակը, սակայն Ոսկանի հրապարակությունից մոտ չորս տասնամյակ անց Կապույտ Մաշտոցներում էլ կանոնների երկու երրորդը թեև որոշակի երկուստեղծությամբ, սակայն կրկնում է 1667 թ. ամսաբերդամյան հրապարակության կանոնները:

Ոսկանի հրապարակած Մաշտոցի ոչ կանոնում և ոչ հիշարակարանում որևէ մասնաշարժում կամ Կապույտ Մաշտոցի չկա նրա օգտագործած ձեռագրից կամ ձեռագիր աղբյուրներից: Այս հարցի մոտավոր պատասխանը կարելի է գտնել Ոսկանի հրապարակած Մաշտոցի և նախորդ շրջանի ձեռագիր Մաշտոցների բաղդարությամբ միայն: Ինչպես գրում է Ն. Ս. Ճեմմեմյանը. «Մաշտոցները կարելի է երկու մեծ խումբերու բաժնել. առաջին՝ որ ամենապարզ և համառոտ ձևերն են, և որ՝ սկսեալ Թ-Ժ դարերէն մինչև ԺԷ-ԺԸ դար պահուած է գանազան ձեռագիրներու մէջ: Ասոց հետ միասին սկիզբ առած է երկրորդ ընդհանր մը, աւելի ընդարձակ, ճոխ աղօթքներով և շարականներով, և աւ ալ իր կարգին սկսեալ ԺԱ-ԺԲ դարերէն մնացած է ձեռագիրներու մէջ՝ աւելի քան առաջին խումբը»:

Ոսկան վրդ. իր Կապույտ օրինակը պարզապես արեւելյան շարժումը հաշտեցնում է այս գանազանությամբ, և իր բնագիրը պարզապես համար օգտագործած է միայն առաջին խումբի ձեռագիրներին, որ ամեն բան պարզ ու համառոտ է, որ չկան ամենաին շարականներ ու աղօթքի գանազանություններ»⁸:

Նայել Սահակը նույն այս պարզապես է բացառություն նաև այն հանգամանքը, որ Ոսկանը Մաշտոցի այս հրապարակության օրինակների մի մասի վերջում գերազանցելով Նախագրային շարականները, ինչպես նաև մի շարք ծիսական գանձեր, Կապույտ, դրանք սկսել է դարձյալ նոր էջահամարով⁹:

Այժմ անցնենք այս Մաշտոցի կանոնների բնությանը: Քահանայական Մաշտոցի գլխավոր չորս կանոններն են Մկրտության, Պատկի, Նաղարության և Թաղման կարգերը որոնք նույն հաջորդականությամբ, ինչպես հանդիպում են քահանայական ձեռագիր Մաշտոցներում, Կապույտ Մաշտոցի կանոններում:

Մկրտության կանոնից առաջ, սակայն, Ոսկանը գերազանցել է Ջրօրհնյաց կանոնը: Ինչպես հայտնի է, Ջրօրհնյաց կանոնը Նայել Սահակից կապույտում է հունվարի վեցին՝ Ս. Ծննդյան և Ասվածաբանության փոխին, և որպես այդ փոխին մի մաս՝ այն ներկայացված է ճաշողում և վերջինիս հունվարի վեցի կանոնի մաս է կազմում: Նույնը վերաբերում է Ավագ Նիգշաբթիի ապաշխարողների արձակման և Ուրվվայի կանոններին, որոնք մասն են կազմում Ավագ Շաբաթվա և ի մասնավորի՝ Ավագ Նիգշաբթիի արարողություններին,

8 Ն. Ս. Ճեմմեմյան, Ոսկանի Մաշտոցը. «Բազմավեպ», Վենետիկ, 1966, էջ 287:

9 Անդ, էջ 287-288

ինչպես նաև Խաղողօրհների կանոնին, որի արարողությունը կատարվում է Տիրամոր վերափոխման փոխին, և այս կանոնը նույնպես ներկայացված է Ճաշոցում:

Ոսկանի փապագրական գործունեության շրջանում դեռևս «Ճաշոց» լույս չէր տեսել և այս կանոնները բնականաբար չէին կարող կատարվել նրանցով: Նաև, քանի որ ձեռագիր Ճաշոցները, պայմանավորված իրենց առավել մեծ ծավալներով և մեծադիր չափերով, անհամեմատ քիչ էին, քան մեծ փարածում ունեցող քահանայական Մաշտոցները, ուստի այս արարողությունների կատարման համար դժվար էր գտնել նաև ձեռագիր Ճաշոցներ: Նախկին շախմատի, որ առաջին Ճաշոցը փապագրվեց Ոսկանի մահից ավելի քան մեկ փառնամյակ անց՝ 1686 թ. հենց Ոսկանի երբեմնի գործակիցների և նրա միջավայրի փապագրիչների կողմից, ի մասնավոր՝ Գասպար Սահրադյանի ու Թադեոս Նամագասպյանի¹⁰:

Ճաշոցից հանված Զրօքինյաց կանոնը և վերջինիս սկիզբը Ոսկանը խորագրել է այսպես. «Կանոն ջուր օրհներոյ, զգեմուն քահանայքն և երթան միաբան և ասեն սաղմոս 28. Ձայն Տեառն ի վերայ ջուրց» (Էջ 1): Այս կանոնը համեմատելով Ճաշոցի Վաղարշապատի հրատարակության համապատասխան հատվածի հետ, տեսնում ենք, որ երկուսում էլ, թեև որոշակի երկուստայնությամբ, սակայն համընկնում են բերված միավորները, թեև Ոսկանի հրատարակությունում առավել համառոտ:

Անհրաժեշտ է նշել, որ թե՛ այս կանոնում և թե՛ հաջորդող մյուս կանոններում Սուրբգրային ընթերցվածների համեմատությունը վեր է հանում որոշակի փոփոխություններ Աստվածաշնչի Ոսկանի հրատարակության բնագրի հետ: Մաշտոցը Ոսկանը հրատարակել է Աստվածաշնչից մեկ փայլ անց, այնպես որ Մաշտոցի սուրբգրային ընթերցումները նա կարող էր համապատասխանեցնել իր հրատարակած Աստվածաշնչի համապատասխան հատվածների բնագրին, սակայն այդպես չի վարվել, կարծում ենք, ելնելով երկու նկատառումից: Առաջին՝ նախ հավատարիմ մնալ հայ ձեռագրային ավանդույթին և այն չվերաիմացրել ըստ իր կազմած հրատարակության, ինչպես որ հինգերորդ դարի հայոց պատմագիրների գործերում Սուրբ Գրքից բերված մեջբերումները չեն վերաիմացրվել և համարեցվել Սուրբ Գրքի բնագրին, այս պարմիչների երկերի հետագա ընթերցանակողների կողմից:

Երկրորդ պարտադր՝ կարծում ենք, ծիսարարական է: Քանի որ Մաշտոցի կանոնները եկեղեցական ձևի կարևոր մասն են, ուստի, ըստ երևույթին, Ոսկան վարդապետը չի ցանկացել, որ սուրբգրային ընթերցվածների փոփոխությամբ փոխի արարողությունների ժամանակ ընթերցվող հատվածների լեզուն և դրանով առավել չմեծացնի իր հրատարակած և ձեռագիր Մաշտոցների բնագրերի միջև եղած լեզվական փոփոխությունները:

Ձեռագիր Մաշտոցների ու դեռևս Աբգար դպիրի փապագրած առաջին Մաշտոցով ձևավորված ավանդույթով նախ գալիս է Մկրտության կանոնը, որն ըստ էության, առաջին կանոնն է, քանի որ Զրօքինյաց կանոնը վերցված է Ճաշոցից և այնքան էլ փարածված չէ Մաշտոց ժողովածուներում: Ամստերդամյան հրատարակությունում Մկրտության կանոնն ունի հետևյալ խորագիրը. «Կանոն մկրտութեան յորժամ զամենայն քրիստոնէից փոխյա կամին մկրտիլ» (Էջ 17): Կ. Պոլսի Մաշտոցում այն անվանվում է «Կանոն առաջին՝ սրբազնագոյն մկրտութեան երեխայից»¹¹: Վաղարշապատի Մաշտոցում այս կանոնն ու-

10 Տե՛ս «Նայ գիրքը 1512-1800 թվականներին», Էջ 97:

11 «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, Էջ 5:

նի Ոսկանի հրապարակության նույն խորագիրը. «Կանոն մկրտության, յորժամ զամենայն թրիստունէից քոյայս կամին մկրտի»¹²:

Մկրտության այս կանոնի համեմատությունը հիշյալ կանոնի ձեռագիրը և քաղաքի կանոնների հետ վեր հանում է մի շարք տարբերություններ թե՛ ծիսական բնույթի և թե՛ ժողովրդական կենդանի արարողությունների հետ կապված:

Այս կանոնի մաս կազմող ժողովրդական բնույթի նման բոլոր արարողությունները դուրս են թողնված Ոսկանի հրապարակությունից, ինչպես օրինակ նարտի կապը: Այս հանգամանքը որոշ չափով պայմանավորված է նաև նրանով, որ Ոսկանը հնագույն Մաշտոցների հերետոքությամբ որոշակի տարբերակում է մարգրել մանկանց և երախայից մկրտությունների միջև՝ առավել շեշտադրելով երախայից մկրտությունը, որ երևում է անգամ այս կանոնի խորագրից, ինչպես նաև տարբեր ենթավերնագրերից և հենց մկրտության կանոնի սկզբում գրվող հերետիքի հրահանգից. «Ապա յառոր մկրտութեան առ դրունս եկեղեցոյն կարարեսցես զայս կարգ հանդերձ միաբան ուխտին ի վերայ քոյային և չափ հասակացն» (Էջ 18), և բերվում են երեք սաղմոսներ: Մկրտության կանոնը չափահասների համար նման տարբերակվածությամբ ներկայացնելու համար Նայր Սահակը գրում է. «Ոսկան վրդ. կամայական կերպով դրած է այս զանազանությունը, պահանջելով որ մեծահասակ երախային մկրտութեան արևն ըստին երեք սաղմոսներ, մինչ իրականութեան մէջ՝ երեք սաղմոսները մկրտութեան կանոնին էական մաս կը կազմեն, և ոչ մէկ ձեռագիր մեծահասակի կամ փոքրահասակի զանազանություն կը դնէ»¹³:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ ծիսական այս հարվածը ոչ թե Ոսկանի նորամուծությունն է, ինչպես նշում է Նայր Սահակը, այլ գրեթե բառացիորեն համապատասխանում է Վենետիկի հնագույն՝ Թ-Ժ դարերով թվագրվող Մաշտոցի (Մաշտոց Ա) Մկրտության կանոնին: Ոսկանի հրապարակությունում գրվող վերը բերված հարվածը գրեթե բառացի համընկնում է կա նաև Վենետիկի այդ Մաշտոցում. «Եւ ապա յառորս մկրտութեան առ դրունս եկեղեցոյն կարարեսցես քահանայն զայս կարգ հանդերձ միաբան ուխտին ի վերայ քոյայոց և չափ(ա)հասակաց»¹⁴:

Նույն ձևով, նորամուծություն չեն և Ն. Սահակի հիշարարված երեք սաղմոսների կարարումները: Այս հարվածը եւս լիովին համընկնում է Ոսկանի և Վենետիկի հնագույն Մաշտոցներում:

Վենետիկի Մաշտոց

Ասի Սդ. ի թիւ Գ: ԻԴ. առ քեզ Տէր համբարձի. ԻԵ. Դ-ար արա ինձ Տէր. Ծ. Ողորմեա ինձ Աստուած:

Ոսկանի Մաշտոց

Էջ 18. Ասի սաղմոս ի թիւ 24՝ Առ Քեզ Տէր համբարձի. 25՝ Դ-ար արա ինձ Տէր. 50՝ Ողորմեա ինձ Աստուած:

Այս հանգամանքն իր կնիքն է թողել ձեռն ողջ ընթացքի վրա: Մկրտության ընդունված

12 «Մաշտոց, յորում առանդին սրբազան արարողութիւնը ազգիս ըստ Սահմանադրութեան Սուրբ Եկեղեցոյն Նայրոց», Վաղարշապատ, 1894, էջ 5:

13 Անդ, էջ 288:

14 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, ի Վենետիկ», հրդ. Գ. «Մաշտոց-Գիրք Զեռնադրութեանց», աշխտ. Ն. Բ. Սարգիսեան, Ն. Գ. Սարգիսեան, Ս. Ղազար, 1966, էջ 19:

կարգում եթե ասվում է «Ապա առնու կնքահայրն զերեխայն ի գիրկն, դառնայ յարեւմուրս եւ ասէ ընդ քահանային երիցս՝ Նրաժարիմք»¹⁵, ապա Ոսկանի Մաշտոցում ասվում է. «Ապայ հրամայէ երախային դառնայ յարեւմուրս, երդմնեցուցանել երիցս անգամ, ասելով Նրաժարիմք» (Էջ 20): Նույնն է նաեւ Վենետիկի Մաշտոցում. «Եւ ապա հրամայէ երախային դառնայ յարեւմուրս եւ երդմնեցուցանել երիցս անգամ»:

«Նրաժարիմքի» ընդունված բնագիրը եւս ներկայացվում է բայի դիմային փոփոխությամբ.

Վաղարշապատ, 1894

Էջ 24. Նրաժարիմք ի սարանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա, ի պարանայ նորա, ի խորհրդոց նորա:

Ամստերդամ, 1667

Էջ 20. Նրաժարիմք ի Քէն սարանայ եւ յամենայն խաբէութեան բումմէ: Եւ ի պարանայ բոց եւ ի պաշտօնէից բոց:

Վաղարշապատի Մաշտոցի նման է Կ. Պոլսի հրապարակությունը¹⁶: *Նրաժարիմք*-ի՝ Ոսկանի վկայակոչած ձևը եւս համապարասխանում է Վենետիկի հնագույն Մաշտոցին. «Նրաժարիմք ի քեն սարանայ եւ յամենայն խաբէութենէ բումմէ»:

Ոսկանը թեւեւ շեշտադրում է երախայի մկրտությունը, սակայն ջրի մեջ ընկղմամբ մկրտությունը արդեն հստակորեն ներկայացնում է որպես մանկան կապարվող մկրտություն՝ գրելով. «Ապա իջուցանէ զմանուկն յառազանն եւ արկանէ զջուրն ընդ գլխովն» (Էջ 25):

Չնայած այս հանգամանքին՝ Ոսկանի հրապարակությունում այնուամենայնիվ կնքահայրը, ում փրվում է ավագանից հանվող մանուկը, չի հիշարակվում:

Թեւեւ իմաստային որոշակի նրբերանգներով փաբեր, սակայն համընկնում է դրոշմի խորհուրդը ինը դրոշմներով:

Մաշտոցներում, այդ թվում եւ Վաղարշապատի, սովորաբար նախ աչքն է հիշվում դրոշմի ժամանակ եւ հետո ականջը, Ոսկանի Մաշտոցում, սակայն, հակառակն է:

Ձեռքերի դրոշման համար Մաշտոցներում ասվում է. «զՁեռնն (ափ ի կից ունելով)»: Ոսկանի մոտ սղմամբ ասվում է՝ «զափակիցն ունելով» (Էջ 27): Այն առավել համառոտ է Աբգար դպիրի հրապարակած Մաշտոցում՝ «զափակիցսն»¹⁷:

Դրոշմի խորհրդին հաջորդող ընթացքը թե՛ ծեսի կապարման եւ թե՛ նրան մաս կազմող միավորների առումով բավականին հակիրճ է, ուր քահանայի խոսքերին ի պարասխան դարձյալ մկրտվողն է պարասխանում եւ ոչ թե կնքահայրը:

Նույն փրամաբանությամբ է պայմանավորված Մկրտության խորհրդի հաջորդող ընթացքը Ոսկանի հրապարակությունում: Դրոշմելուց հետո ընդունված կարգով այնուհետեւ երախային փրվում է առաջին հաղորդությունը, ապա եւ նկարագրվում է փուն փանելը եւ մկրտության ութօրեքը մկրտության թագվերացով, որը Վաղարշապատի Մաշտոցում բերվում է «Կարգ հաղորդելոյ», «Նորոգ մկրտելալս», «Նորոգ մկրտելոց» խորագրերի ներքո, այնինչ Ոսկանի Մաշտոցում ավագանից հանելուց հետո մկրտյալին հազցնում են եւ «հաղորդեցուցանէ ի սուրբ խորհրդոյն, յուղարկէ մինչեւ ի դուռն եկելոցոյն»:

¹⁵ «Մաշտոց», Վաղարշապատ, 1894, էջ 24:

¹⁶ «Մաշտոց», Կ. Պոլիս, 1807, էջ 9:

¹⁷ Երեսնի Մատենադարան, ձեռ. հմ. 8264, թ. 19բ:

Մկրտավաճին եկեղեցուց հանելով սկսվում է ժողովրդական արարողությամբ ուղեկցվող ընթացքը. «Յեւ մկրտութեան՝ քահանայքն առեալ քաննն ի Սուրբ Եկեղեցոյն գմանունն ի քուն շուրջառաւ, առեալ քաննն եւ լուսեալ մոմեղինօք», ասվում է Վաղարշապատի Մաշտոցում (Էջ 79): Մաշտոցները նաեւ գեղեցիկ ձևով են ներկայացնում ութօրյա այս ընթացքը, թե ինչպէս են երգում քուն մարմնով, ապա մանկանը մորն են քալիս եւ ութերորդ օրը նորոգ մկրտյալի նարտը քանդում եւ քահանայի գլխավորությամբ լողացնում մանկանը:

Ոսկանի Մաշտոցում ութօրյա այս ընթացքի համար ասվում է. «Եւ ողջունեալ ի ժողովրդոցն արձակին ի քունս իւրեանց: Եւ եօթն օր յեկեղեցոջն կացցէ եւ ամենայն ուրեք սպիտակագգեստ քիցի եւ զգլխն ծածկեալ պահեսցէ սպիտակ փակեղամբ: Զգոյշ կալով աղօթից եկեղեցոյն, պարապելով հաղորդելոյ մարմնոյ եւ արեան Քրիստոսի: Իսկ յառուր ութերորդի՝ վերացուցանէ քահանայն զթագն» եւ ասվում է «Որք մկրտեցան եւ լուսաւորեցան» աղոթքը:

Այս հարվածը գրեթե բառացի համընկնում է Վենետիկի հնագույն Մաշտոցի հետ, ուր ասվում է. «Եւ ողջունեալք ի ժողովրդոցն յողարկին ի քունս իւրեանց: Եւ ութ ար քեկեղեցոջն կացցէ, սպիտակագգեստ քիցի եւ գլխն ծածկեցէ՝ սպիտակ փակեղամբք, զգոյշ կացցէ՝ աղօթից եկեղեցոյն պարապելով յամենայն ժամ, հաղորդելով մարմնոյ եւ արեանն Քրիստոսի: Եւ յեւ ութ առուր վերացուցանէ քահանայն զպսակն»¹⁸:

Այսպիսով, երախայի մկրտության արարողության ժողովրդական պոնախմբության ողջ ընթացքը այսպիսով փոխարինված է չափահաս երախայի ութօրյա գիտակցական առանձնացմամբ եւ խեղմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ Աբգար դպիրի հրապարակած Մաշտոցում նույնպէս չափահաս երախան է մկրտվողը, ով ութօրյան անցկացնում է եկեղեցում առանձնությամբ: Նաեւ նրա հանդերձները եւ պահվածքը ուղղակիորեն հիշեցնում են Ոսկանի Մաշտոցի համապատասխան հարվածը. «Եւ ողջունեալք ի ժողովրդինն արձակին ի քունս իւրեանց եւ ութ ար քեկեղեցոջն կացցէ:

Եւ սպիտակագգեստ քիցի:

Եւ զգլխն ծածկեալ ունիցի սպիտակ փակեղամբ:

Եւ զգոյշ քիցի եկեղեցոջն:

Եւ հաղորդեսցի մարմնոյ եւ արեան Տեառն հանապազ:

Եւ յեւ ութ առուր վերացուցանէ քահանայն զթագն եւ ասէ զաղաթս այս. Որք մկրտեցան եւ լուսաւորեցան»¹⁹:

Ինչպէս տեսնում ենք, այս հարվածը բառացիորեն համընկնում է Վենետիկի հնագույն, Աբգարի եւ Ոսկանի Մաշտոցներում: Նամընկնումը այնքան մեծ է, որ կարելի է անգամ ենթադրել, թե Ոսկանը օգտվել է Աբգարի հրապարակությունից, եթե նույն այս նմանությունը չգտնեինք նաեւ Վենետիկի Մաշտոցում, որը միջանկյալ դիրք է գրավում Ոսկանի եւ մնացյալ Մաշտոցների միջեւ: Ի տարբերություն Ոսկանի Մաշտոցի, ուր Մկրտության կանոնը հիմնականում վերաբերվում է չափահաս երախային, Վենետիկի Մաշտոցում Մկրտութեան

18 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Վենետիկի», հր. Գ, էջ 22:

19 Երեւանի Մարտիրոսաբան, ձեռ. հմ. 8264, թ. 22բ:

յունը զուգահեռ ներկայացվում է թե՛ երախայի և թե՛ մանկան համար, որն արտահայտվում է վերնագրից սկսած. «Կանոն մկրտության յորժամ գշտվահաս գոթ քրիստոնեայ առնեն կամ յորժամ գրքիստոնեից քոյայս մկրտեն»²⁰:

Վերնագրից սկսվող այս զուգահեռականությունը Վենետիկի Մաշտոցում արտահայտվել է նաև ծեսում, ուր իրար զուգահեռ հիշվում են երախան և մանկան փոխարեն հանդես եկող կնքահայրը. «Եւ ապա հրամայէ քահանան երախային կամ կնքահօրն դառնալ յարեւմուտս»: Տամանման ձեռով քահանան այնուհետք երախային կամ կնքահօրն է հարցնում. «Եւ ապա հարցանէ ցերախայն կամ ցկնքահայրն»:

Նույնը վերաբերում է և մկրտությանը հաջորդող ութօրեքին, որը Վենետիկի Մաշտոցում ներկայացված է որպես յոթօրեք, և ասվում է. «Իսկ մկրտեալն եթէ երախայ է, առեալ քանին ի դուռն, իսկ եթէ չափահաս իցէ, զեօթն օր յեկեղեցոջ կացցէ և սպիարակազգեսոր լիցի և զգլուխն ծածկեալ ունիցի սպիարակ փակեղամբ կամ կտառով ինչ:

Զգոյշ կացցէ եկեղեցոյ և աղօթից պարապեսցի յամենայն ժամ և ի պարարագի հաղորդեսցի մարմնոյ և արեանն Քրիստոսի»²¹:

Ոսկանի Մաշտոցում քանի որ շեշտադրումը դրված է երախայի և ոչ թե մանկան վրա, ուստի այսպիսի չկա քառասունքից հանկու կանոնը:

Այսպիսով, հարակորեն երևում է, որ Վենետիկի Մաշտոցի հրատարակիչները օգտվել են Ս. Ղազարի հնագույն Մաշտոցից և հնագույն այս խմբագրությանը պարզապես նման մեկ օրինակից է օգտվել և Ոսկան Երևանցին:

Մաշտոցներում ընդունված կարգով հաջորդը ներկայացվում է Պսակի կանոնը: Տայ ձեռագրային ավանդույթով կանոնների անվանումները ոչ միայն նշվում էին քոյայ կանոնի խորագրում, այլև ստորին կամ վերին լուսանցքներում, և սովորաբար այդ կանոնը մի դեպքում ներկայացվում էր մի անվանմամբ, իսկ մյուս դեպքում՝ մեկ այլ: Ոսկանը հավատարիմ է մնացել և այս սկզբունքին, որի համար այս կանոնի խորագիրն է «Կանոն հարսանեաց պսակի», իսկ էջի վերին լուսանցքում այն անվանվում է «Պսակ առնելոյ»:

Ոսկանի Մաշտոցում պսակի կանոնը արդեն չունի Ս. Ղազարի հնագույն Մաշտոցի սեղմությունը և ավելի մոտ է ժողովրդական ավանդույթներին, սակայն չունի պսակին նախորդող և հարսանեական արարողությունների անբաժանելի մաս կազմող Նալավի և Նշանի օրհնությունների կանոնները:

Պսակի կանոնը այսպիսի միանգամից սկսվում է եկեղեցու դռան մոտ հարսի և փեսայի ծունր գալով. «Նախ քանի ի դուռն եկեղեցոյն և զգուշութեամբ խոստովանեցուցանէ քահանայն զհարսն և զփեսայն: Եւ ապա նաջօր ոլորէ և ընդ ոլորելն ասէ սաղմոս Ի» (էջ 31): Վաղարշապատի և մյուս Մաշտոցների Պսակի կանոնի նման այսպիսի առանձնաբար ներկայացվում է նաև հարսի և փեսայի նաքոսների ոլորումը:

Պսակի ընդունված կանոնի հետ համընկնում են նաև քահանայի՝ հարսին և փեսային ուղղված հարցումները քեր և հնագույն լինելու մասին: Այն, սակայն, բերված է ոչ թե ընդունված հարցով՝ պարասխանով և խրատներով, այլ համառոտ հարցումների նկարագրական ընթացքով:

20 «Մաշտոց», Վենետիկ, 1830, էջ 1:

21 Անդ, էջ 36:

Պսակի կանոնին երևի, յոթ կամ ութ օր հետո հաջորդում է Թագվերացը, որը, սակայն, Ոսկանը անգամ որպես առանձին կանոն չի նշում ևս առանձին խորագրով չի փախս, այլ շարունակվում է հարսանյաց պսակի վերջում՝ վերին լուսանցային «Պսակ առնելոյ» նշման փակ:

Ինչպես հայտնի է, երկրորդ ամուսնության պսակը շար ավելի անշուք է կարարվում: Այն առավել անշուք է ներկայացված Ոսկանի Մաշտոցում. «Կանոն երկրորդ ամուսնության պսակ. սարկառագն թարգլե Սուրբ եկեղեցոյ մեջսեղև ևս բաժակաւ գինի պարարաս- փի» (Էջ 42):

Քանի որ երկրորդ պսակը ինչ-որ փող մերժելի է, ուստի, ըստ երևույթին, որպես մեղանշման յուրօրինակ արարահայտություն, պսակվողները «ասեն երկույրասան Տէր ողորմեայ» (Էջ 42), որից հետո քահանան երկու աղոթք է ասում, ապա գինի խմեցնում նրանց, և արարողությունն ավարտվում է «Պահպանիչով»:

Պսակի կանոնաշարին ընդունված կարգով հաջորդում է Նաղորդության կանոնը՝ «Կանոն հաղորդ փալոյն» (Ամսա., էջ 46), որը ձեռագիր «Մաշտոցներում», ինչպես նաև Կ. Պոլսի և Վաղարշապատի փայագիր հրապարակություններում անվանվում է «Նաղորդ փալոյն»:

Նաղորդություն փալոց հետո քահանայական Մաշտոցներում սովորաբար ներկայացվում է Թաղման կարգը: Կ. Պոլսի հրապարակությունում այս կանոնը անվանվում է «Կարգ թաղման ննջեցելոց աշխարհականաց, արանց ևս կանանց» (Էջ 46): Վերջինիս անվանումը ավելի համառոտ է ամսերդամյան հրապարակությունում. «Կանոն համօրէն ննջեցելոցն» (Էջ 51):

Որպեսզի այնպես չընկալվի, որ այս կանոնը վերաբերվում է նաև հոգեւորականներին, արդեն հիշյալ ձեռագրային ավանդույթով այս կանոնի էջերի վերին լուսանցքում այն անվանվում է «Աշխարհաթաղ առնելոյ»:

Նույն ձեռով, թաղման հաջորդ օրն առավոտյան գերեզման գնալու կարգը կանոնի խորագրում անվանվում է «Երկրորդ ատուրն յորժամ երթան ի գերեզմանն», իսկ լուսանցքում այն անվանվում է «Այգ առնելոյ»: Կ. Պոլսի Մաշտոցում այս կանոնն ունի «Մեծի այգուց կարարելոյ» (Էջ 62) խորագիրը:

Նույն կառուցվածքով են փրված նաև Տղայաթաղի և փղայի այգուցի կանոնները, որոնք բավականին մանրամասն ներկայացվում ևս համընկնում են մյուս Մաշտոցների հետ: Ոսկանի Մաշտոցը, սակայն, չունի փղայի յոթի կանոնը, ինչպես նաև քառասունքն ու փալին կարարելու մասին հիշարարությունները:

Այս Մաշտոցի աշխարհականներին վերաբերվող կանոնների շարքն, ըստ էության, ավարտվում է Տղայաթաղին հաջորդող և Ավագ Նինգշաբթիին կարարվող «Կանոն Մեծի Նինգշաբթուն գապաշխարօղսն արձակելոյ» և Ոսկանի կանոններով, որոնք, ինչպես ասացինք, ավելի շար հարաբերվում են Ճաշոցի հետ, և Ոսկանը այնքանից Ավագ հինգշաբթիի կանոնից վերցնելով դարձրել է Մաշտոցի առանձին երկու կանոն: Ճաշոցում Ավագ Նինգշաբթիի արարողությունների թվարկման և ընթացքի նկարագրության մեջ երրորդ ժամի համար ասվում է. «իսկ ի յերրորդում ժամու ժողովեացին ի դուռն եկեղեցոյն վասն արձակելոյ գապաշխարօղսն. թէ իցէ ևս թէ ոչ՝ զկարգն կարարել պարս Է», որից հետո հրահանգ-

վում է. «Եւ ասա ի վերայ Սաղմոսարանին թիւ գուրդայս վեց»²²: Ոսկանի մոտ հիշյալ հարվածը հերեյալ ձեռով է ներկայացված. «Ժողով է քահանայն զապաշխարողսն ի դուռն եկեղեցոյն եւ ասեն գուրդայս վեց» (Էջ 103): Քանի որ այս կանոնը Ճաշոցում մի մասն է Ավագ Տինգշաբթիի արարողությունների, ուստի Ոսկանը թեև որոշակի կրճատմամբ, սակայն հարազատորեն ներկայացնելով այդ մասը, որոշակի փոփոխություններ է կարարել սկզբում, որպեսզի այն դառնա ընդունված կարգով սկիզբ ունեցող առանձին մի կանոն: Ահա այս պարզաբանությամբ Ոսկանը դուրս է թողել երրորդ ժամին հավաքվելու մասին խոսքերը: Ճաշոցում այն վերաբերվում էր եկեղեցական ինը ժամերգություններից երրորդ ժամի արարողություններին: Ոսկանը դուրս թողնելով այդ կապակցությունը, ապաշխարողներին վերաբերվող այս բաժինը արդեն դարձրել է առանձին կանոն: Ինչպես արդեն ասացինք, մինչ «Ճաշոցի» առանձին հրապարակությունների ի հայտ գալը, 1704 թ. իր հրապարակած «Մաշտոցում» այդպես է վարվել եւ Աստվածատուր Կոստանյանյանը, այն որպես առանձին կանոն բերելով նույն վերնագրով. «Կանոն Մեծի Տինկ շաբաթուն զապաշխարողսն արձակելոյ»²³:

Անհրաժեշտ է նշել, որ Վենետիկի հնագույն ձեռագիր Մաշտոցը եւս ունի Ավագ Տինգշաբթիի ապաշխարողների արձակման եւ Ուրնվայի կանոնները²⁴:

Ճաշոցում ընթերցվածների շարքը մի քանի անգամ ընդմիջարկվում է ծխական արարողությունների նկարագրությամբ եւ հրահանգներով, որոնք Ոսկանի Մաշտոցում բոլորը ի մի են հավաքվել եւ ներկայացվում են որոշակի համառոտությամբ, որը եւս պայմանավորված է Ավագ Տինգշաբթիի արարողությունների այս շարքը որպես մեկ կանոն ներկայացնելու ցանկությամբ: Այսպես, Ճաշոցում ասվում է. «Եւ մարեալ յեկեղեցին սկսանիցին Շաբական»²⁵:

Այն Ոսկանի մոտ ներկայացված է այսպես. «Ապա առեալ քահանայն զապաշխարողսն մարանեն յեկեղեցին» (Էջ 117): Ոսկանի հիշյալ ծխական հրահանգ նկարագրությունը ավարտվում է այսպես. «Եւ դնեն զաւերարանն առաջի բեմին եւ համբուրեն զաջ քահանային եւ զմիմեանս, եւ քանցեն զչորեքդրամեանն, որպես հրամայեաց Մովսէս Ղևորացոյն»: Եկեղեցի մտնելն ու չորեքդրամյանը քալը Ոսկանի մոտ եթե ներկայացված են մի պարբերությամբ, ապա Ճաշոցում, համաձայն Մովսիսական օրենքի փոփոխության, ասվում է մի քանի էջ անց, թեև նկարագրությունը համընկնում է. «Եւ դիցեն զՄուրբ Խաչն եւ զԱւերարանն առաջի բեմին, եւ համբուրեսցեն, եւ քանցեն զչորեքդրամեանն, զոր կարգեաց Մովսէս Ղևորացոյն: Եւ օրհնեսցէ քահանայն զապաշխարողսն, եւ արձակեսցէ»²⁶:

Ճաշոցում արարողությունը այնուհետև շարունակվում է վեցերորդ ժամին՝ որպես շարունակությունը երրորդ ժամի արարողության: Այս մասին հիշյալ հարվածում ասվում է. «Իսկ ի վեցերորդ ժամուն՝ ժողովեսցին ի յեկեղեցին, ծածկեսցեն զսեղանն եւ ասացեն զմնացեալ Ողորմեայսն»²⁷: Ոսկանի Մաշտոցում, սակայն, դրանի ընծայման պարզության անմիջապես հետո ասվում է արարողությունը եզրափակող օրհնությունը. «Օրհնութիւն, զոր օրհնէ առաջնորդն զժողովուրդն ըստ խորհրդոյն (Էջ 118): Այս օրհնությունն ունի հերեյալ

22 «Ճաշոց գիրք Նայասարանայց Եկեղեցոյ», Վաղարշապատ, 1872, էջ 191:

23 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1704, էջ 525-556:

24 «Մայր ցուցակ Վենետիկի», հր. Գ, էջ 36-37:

25 «Ճաշոց», Վաղարշապատ, 1872, էջ 196:

26 Անդ, էջ 199:

27 Անդ, էջ 199:

սկսվածքը. «Օրհնեալ է անբա մարդասիրություն -Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Այս օրհնութեամբ նաև անցում է կատարվում դեպ Ուրնովայի արարողությունը:

Ճաշոցում Ուրնովան ներկայացված է Ավագ Նինգշաբթիի արարողությունների շարքում որպես տասներորդ ժամին կատարվող արարողություն: Ուրնովան որպես առանձին կանոն Ոսկանի Մաշրոցում ունի հետևյալ խորագիրը. «Կանոն Մեծի Նինկշաբթուն Ուրնալուային» (Էջ 121), իսկ Էջի վերին լուսանցային նշումն է. «Ուրնալուա առնելոյ»²⁸:

Ոսկանը թեև այս Մաշրոցում խուսափում է ծիսական տաղեր և գանձեր գեղեղելուց, ինչպես որ վարվել էր ջրօրհնյաց դեպքում, այս կանոնում սակայն, հետևելով Ճաշոցին, բերում է Ուրնովայի «Այս խորհուրդ լցաւ» սկսվածքով գանձը, որի հեղինակն է Մխիթար Այրիվանեցին: Փոխարենը, սակայն, բերված է Առաքել Սյունեցու «Աստուածն ամենի, Միածին Որդի» սկսվածքով տաղը:

Ճաշոցում նախ ներկայացված է ջրի Տյառնագրումը ասվող օրհնության խոսքով, և ապա նոր՝ ուրբերի լվացման արարողությունը²⁹: Ոսկանը այս երկուսը միացրել է իրար: Միաժամանակ, նա թեև նախորդ կանոններում ծիսական ընթացքը որոշակիորեն կրճատում էր, այսպիսի մի փոքր ավելի մանրամասնեցնում է՝ ըստ երևույթին ցանկանալով այս արարողությունը ավելի հանդիսավոր ներկայացնել գաղթաշխարհի քաղաքային միջավայրում:

Ճաշոցում որևէ հիշարարություն չկա Ուրնովայի ժամանակ ուրբերին խաչանման յոդ դրոշմելու մասին, որը գրում է Ոսկանը: Նույն ձևով որևէ հիշարարություն չկա և այն մասին, թե երբ քահանան լվանում է հավաքվածների ուրբերը, հավաքվածներն էլ պարտավոր են քահանայի ուրբերը լվանալ, ինչպես որ Ոսկանն է ասում, թե նրանք էլ նրան՝ այսինքն քահանայի ուրբերն են լվանում:

Ոսկանի հրապարակած Մաշրոցում ամենամեծ ծավալն ունի Քահանայաթաղի կանոնը (Էջ 142-242): Վերջինիս խորագիրը ևս բավականին ծավալուն է. «Կանոն յորժամ եպիսկոպոս կամ քահանայ կամ Նայրապետ կամ ուխտի առաջնորդ կարարի մահուամբ»:

Ամստերդամյան Մաշրոցում փոխվում է ամենամանրամասն ծիսական նկարագրությունը վախճանյալի լվացմամբ, պարանոմամբ, գերեզմանի փորմամբ, հողը դնելով, գերեզմանը կնքելով և այդ ընթացքում ասվող սուրբգրային ընթերցվածներով, շարականներով և աղոթքներով: Ավելին, նույն ձևով բերված են նաև քահանայաթաղի հաջորդ յոթ օրերը ևս (Էջ 242-268):

Կ. Պոլսի Մաշրոցում քահանայաթաղի կանոնը գեղեղված է ամենավերջում³⁰:

Այս կանոնաշարը Կ. Պոլսի և Ամստերդամի հրապարակություններում իրար գուցա-հեռ է ընթանում, թեև կան որոշ տարբերություններ, և Ոսկանի՝ ծավալային նկարագրումներով կատարած կրճատումներ:

Վախճանյալին մահիճը դնելով «Դասք պաշտօնէիցն **սկումբին** շուրջ զվախճանելովն» (Ամստ., էջ 147): Կ. Պոլսի հրապարակությունում նույնը այսպես է ասվում. «Եւ դասք պաշտօնէիցն **պարս առեալ** զվախճանելովն»: Ինչպես տեսնում ենք, «պար առեալ»-ի փոխարեն Ոսկանի հրապարակությունում գրված է **սկումբին**:

28 Անդ, էջ 205:

29 Անդ, էջ 213:

30 Անդ, էջ 344-422:

Ինչպես րեսանք Ուրնվայի գուգադիր բերված հապվածից, այնրեդ ես չկար «պար առեալ» կապակցությունը: Ոսկանը, ըստ երևույթին մտածել է, որ այն ծեսին ներկա եղողների կողմից կարող է բառացիորեն ընկալվել որպես պար, ուստի ես այս կապակցությունը Մաշտոցում որպես հանդիպում է, փոխում է մեկ այլ կապակցությամբ: Բնագրային ես իմաստային առումով հեղաբերքի ես նաև գերեզմանին տրված անվանումները երկու Մաշտոցներում:

Ամստերդամ

Էջ 145. ...գիտություն վիրապին վեց թիգ:

Կ. Պոլիս

Էջ 349. ...գիտություն բրածին վեց թիգ:

Նկարաբերքի տարբերություն, ավելի ճիշդ՝ բնագրային տղում է նաև հերեյալը:

Ամստերդամ

Էջ 168. ...Ես բառնան բահանայքն ես բերեն ի դուրս սրահի եկեղեցուն: Ես այս կանոն կարարի

Կ. Պոլիս

Էջ 362. Ես բառնան բահանայքն ես բերեն ի դուրս սրահի եկեղեցուն: Իսկ եթե սրահ ոչ իցե, այսինքն ժամատուն, անցնե յանդիման դրան եկեղեցուն:

Այս կրճատումը ցույց է տալիս, որ Ոսկանը իր Մաշտոցը հրատարակելիս նկատի է ունեցել այնպիսի մի միջավայր, ուր ծիսական նման մանրամասների կատարման համար համապատասխան տեղային պայմաններ չեն եղել: Այս հանգամանքը ես վկայում է, որ «Մաշտոցի»՝ Ամստերդամի այս հրատարակությունը ավելի շատ ուղղված է եղել գաղթաշխարհի ես քաղաքային միջավայրի հայտնության:

Ամստերդամի օգտին է խոսում նաև բահանայաթաղի կանոնի Ամստերդամի հրատարակությունում բացակայող հերեյալ դրվագը, որը սակայն, կա Կ. Պոլսի հրատարակությունում, ուր ասվում է. «Ես թե ննջեցեալն կաթողիկոս իցե, գայս աղօթս ես հանդերձ կցորդին կարդա»³¹: Այսպիսով կարելի է մտածել, որ Ոսկանը ենթադրել է, թե այն միջավայրում, ուր տարածվելու էր իր հրատարակած Մաշտոցը, դժվար թե վախճանման պահին կաթողիկոս գրվի, ես ծիսական այս հրահանգը չի գերեղել: Փոխարենը, սակայն, դրել է եպիսկոպոսի վախճանմանը վերաբերվող հրահանգը, քանի որ եպիսկոպոսները թեմակալ առաջնորդի հանգամանքով սպասավորել են նաև հայկական գաղթավայրերում: Ահա այս պատճառով դրել է հիշյալ հրահանգը, ուր ասվում է. «Ես եթե յեպիսկոպոսաց իցե գաթոն ես զգաւզանն յեկեղեցուն դնեն, մինչեւ այդ յաջորդի» (Էջ 194): Այս հարվածը բառացի նույնությամբ կրկնվում է նաև Կ. Պոլսի Մաշտոցում³²: Ոսկանը այն կարևոր է համարել գերեղելու, քանի որ ուղղակիորեն վերաբերում է հենց հեռավոր թեմերին, ուր բավական երկար ժամանակ

31 Անդ, էջ 369:

32 Անդ, էջ 375:

էր անցնում մինչև որ առաջնորդի վախճանման լուրը կաթողիկոսարան էր հասնում, նոր առաջնորդ էր նշանակվում և իրեն հանձնված վիճակը հասնում:

Քահանայաթաղի յոթ օրերի կանոնաշարից բացի Կ. Պոլսի հրապարակությունը ունի նաև 15-րդ օրվա, ապա և քառասունքի և փարոս, որն անվանվում է «Տարեցին» կանոնները³³: Ոսկանի Մաշտոցը սակայն, թե՛ Աշխարհականաթաղի և թե՛ այս դեպքում՝ Քահանայաթաղի, չունի այս կանոնը:

ԺԷ դարում թե որքան դժվար է եղել Մաշտոց ծխարանի, ու առավել ևս Քահանայաթաղի կանոնի հրապարակությունը և միաժամանակ որքան կարևոր, երևում է այս հրապարակությունից ավելի քան մեկ դար անց Ս. Էջմիածնի՝ իր իսկ կողմից հիմնած նորաբաց քաղաքանում Սիմեոն Ա Երևանցու 1777 թ. հրապարակած «Կարգ թաղման կարգաւորաց» գրքի վերջում երջանկահիշատակ Նայրապետի գերեզմանի հիշատակարանից, որում, ինչպես նշում է Սիմեոն Նայրապետը, իր նպատակն է եղել կազմել Մեծ Մաշտոցի ճշգրիտ բնագիրը, քանի որ այս հարցով զբաղվողները գիտեն, թե ինչքան ու ինչպիսի սխալներ և աղճատումներ էին ներմուծվել ձեռագիր և փպագիր Մաշտոցները: Ահա այս պարճառով հավաքելով Մաշտոց ծխարանի ձեռագիր օրինակները, ուղղվելիք տեղերը ուղղում է, իսկ հեղափոխում ներմուծածները կրճատում և հանում: Նաև լրացնում է թերին, այսինքն այն միավորները, որոնք ժամանակի ընթացքում հանվել էին իրենց տեղերից թե՛ ընդօրինակողների և թե՛ փպագրողների մեղքով: Սիմեոն Երևանցին, ինչպես ինքն է ասում, ուղղել է նաև իմաստային խաթարումները: Այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե ինչո՞ւ Մեծ Մաշտոցից միայն Քահանայաթաղի կանոնն է ընտրել փպագրելու համար: Ասում է, թե պարճառն այն էր, որ այս կանոնն ավելի էր աղճատվել, քան մնացյալները: Քահանայաթաղի կանոնը հրապարակելու պարճառներից մեկն այն էր, որ վերջինս ավելի քիչ հանդիպող կանոն էր, որի բնագիրը պարբերաբար է՝ առաջնորդվելով վերը հիշված սկզբունքներով³⁴:

Այսպիսով, եթե Ոսկանից մեկ դար անց Սիմեոն Երևանցին հայրապետական իր իշխանությամբ դժվարանում էր Մաշտոցի բնագրերի խմբագրության հարցում, և այն էլ այն դեպքում, երբ իր քրամադրության ներքո ունեւ Ս. Էջմիածնի հոգակալոր ձեռագրարան արդեն ձեւավորվող հավաքածուն, ապա ինչ պատճառներով է աներ հայրենիքից հեռու Ոսկանը դրանից մեկ դար առաջ:

Տպագիր Մաշտոցների, այդ թվում և Սիմեոն Երևանցու աշխարանքի վրա խաբսիված Կ. Պոլսի 1807 թ. և Ս. Էջմիածնի ԺԹ դարի երկու հրապարակությունների համեմատությունը Ոսկանի Մաշտոցի հետ վեր է հանում մի շարք ընդհանրություններ՝ ցույց տալով, որ Ոսկանը հավաքարիւմ է մնացել հայ ձեռագրային ավանդույթին և այն փոխանցել գնալով ծավալվել սկսվող հայկական փպագրությանը:

Տպագիր Մաշտոցները համեմատությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Ոսկան Երևանցին ևս առաջնորդվել է Մաշտոց ծխարանի կանոնների բնագրերի պարբերաբարության նույն այն սկզբունքով, որով Մայր Մաշտոցի կազմման բնագրի պարբերաբարության է ձեռնամուխ եղել այնուհետև Սիմեոն Երևանցին՝ նպատակ ունենալով ճշգրիտ բնագիրը՝

33 Անդ, էջ 421:

34 «Կարգ թաղման կարգաւորաց», Ս. Էջմիածին, 1777, էջ 509:

այն մաքրելով իմաստային խաթարումներից, միավորների երեւառաջությունից, հեղափոխականի նորամուտը հավելումներից, ինչպես և վերականգնելով ժամանակի ընթացքում դուրս մնացած մասերը:

Քահանայաթաղի այս կանոնին հաջորդում է Ապաշխարության կանոնը՝ «Կանոն կոչումն յապաշխարութեան» (Էջ 268): Կ. Պոլսի հրապարակությունում այս կանոնն անվանվում է «Կանոն զմեղուցեալսն յապաշխարութիւն կոչելոյ» (Էջ 218):

Մաշտոց ծիսարանի ամենադարձված կանոններից է «Կանոն ժամահար օրհնելոյ» անվանվող կանոնը: Այն այսպես է կոչվում Ամսարեղամի և Կ. Պոլսի հրապարակություններում, իսկ Վաղարշապատի Մաշտոցում «Կանոն ժամահար (Զանգակ, կոչնակ) Քշոց, բուրվառ եւլն, օրհնելոյ»³⁵:

Կ. Պոլսի հրապարակության կանոնի սկզբում ասվում է. «Բերեն յեկեղեցին և լուսնան նախ ջրով, և ապա գինեաւ և ջնջեն սուրբ ջնջոցով» (Էջ 217): Ս. Էջմիածնի հրապարակությունում ասվում է. «Բերեն յեկեղեցին՝ առաջի բեմին, լուսնան նախ ջրով և ապա գինեաւ և ջնջեսցեն մաքուր կրաւով»³⁶: Ոսկանի Մաշտոցում այս կանոնի սկիզբը համադրումն է Էջմիածնի Մաշտոցի վերնագրի և Կ. Պոլսի հրապարակության սկզբի «Կանոն ժամահար օրհնելոյ՝ այսինքն զանգակ և կոչնակ: Տանին յեկեղեցին առաջի բեմին: Եւ լուսնան նախ ջրով և ապա գինով, և մաքրեն ջնջոցաւ» (Էջ 286): Ինչպես տեսնում ենք, այսպիսի Ոսկանը նախ որպես ժամահարի բացառություն թվում է վերջինիս մաս կազմող եկեղեցական առարկաները, հետո նոր նկարագրում սկսվող ծիսական արարողությունը: Նոր գրական լեզվի զարգացմամբ ջնջող բառն աստիճանաբար սրացավ ոչ դրական իմաստ, ուստի եթե Ոսկանի և Կ. Պոլսի հրապարակություններում ասվում է, թե գինով ու ջրով լվացված առարկաները այնուհետև սրբվում են ջնջոցով, ապա ԺԹ դարի 2-րդ կեսին հրապարակված Մաշտոցում արդեն օգտագործվում է «մաքուր կրաւ» կապակցությունը:

Քահանայական Մաշտոցների տարածված կանոններից է ժողովրդական կյանքի և արգասաբերության հետ կապվող Խաչավալայի կանոնը: Կապված լինելով ժողովրդական կյանքի և հավաքալիքների հետ՝ տարբեր Մաշտոցներում այն տարբեր անվանումներ և վերջինս բացառող մեկնաբանություններ ունի.

Ամսարեղամի «Մաշտոց»՝ «Կանոն խաչավալայ առնելոյ. Ամենայն ցեղ ցառոց բուսոց, փնկոց և պտոց» (Էջ 288):

Կ. Պոլսի Մաշտոց՝ «Կանոն խաչի զջուր օրհնելոյ (որ ասի Խաչավալայ) ի բժշկութիւն ախտացելոց, ի ծնողկանութիւն հօրից և ի պտղաբերութիւն բուսոց և փնկոց:

Ս. Էջմիածնի 1894 թ. «Մաշտոց»՝ «Կանոն խաչավալայ առնելոյ, որ կոչի խաչահանգիստ ի բժշկութիւն ամենայն ցառոց մարդկան և հօրից, բուսոց և փնկոց» (Էջ 301):

Խաղողի օրհնությունը վերը հիշված մի շարք արարողությունների նման Ոսկանը վերցրել է Ճաշոցից և դարձրել առանձին կանոն: Խաղողի օրհնությունը, ինչպես հայտնի է, կատարվում է Տիրամոր Վերափոխման փոռին: Նայաստանի մի շարք շրջաններում, սակայն, կապված բերքի հաստունացման և եղանակային պայմանների հետ, այն կատարվում է աշնան սկզբին՝ Սուրբ Խաչի փոռին: Նկատի ունենալով այս հանգամանքը և ցանկանա-

35 «Մաշտոց», Ս. Էջմիածին, 1898, էջ 399:

36 Անդ, էջ 399:

ով նշել, որ օրհնությունը կատարվում է այս փոփոխման մատուցվող Ս. Պատարագից հետո, խաղողի օրհնության սկսվածքում գրում է. «Կանոն խաղող օրհնելոյ ի փօնի Վերափոխման Սրբուհոյ Աստուածածնին եւ Սրբոյ Խաչին զկնի արձակման պատարագին» (էջ 312): Այնուհետև թվարկվում են օրհնության ժամանակ ասվող ընթերցվածները, որից հետո որոշակի համառոտությամբ բերված է Ս. Ներսես Շնորհալու՝ Խաղողի օրհնության աղոթքը, որով եւ ավարտվում է այս Մաշտոցը՝ չունենալով որեւէ հիշատակարան:

Նայ ձեռագրային ավանդույթով Մաշտոցի փաթեթը կանոններին կից կամ որպես արարողության մաս դրվում էին ծիսական բնույթի գանձեր եւ փաղեր: Ասվածը վերաբերում է հարկկապես մարդկային ամենօրյա կյանքի հետ հարաբերվող եւ քահանայական Մաշտոցների ամենահաճախակի կիրառվող երեք՝ Մկրտության, Պսակի եւ Թաղման կանոններին, որոնց նվիրված մի շարք գանձեր կան, որոնք հայտնի են ծիսական գանձեր անվանմամբ: Այս գանձերի կարեւոր յուրահատկություններից մեկն այն է, որ նրանք ավելի շարահանդիպում են Մաշտոցներում, քան «Գանձարան» ժողովածուներում:

Մաշտոցներում այս գանձերն ու փաղերը, ինչպես ասացինք, հանդիպում են կանոնի արարողության ընթացքի համապատասխան մասում՝ կանոնի վերջում եւ կանոնի վերջում, որ ավելի փառածված է, Մաշտոցի վերջում: Տարբեր Մաշտոցների վերջում գտնվող գանձերը ծնունդ են տալիս մի նոր ժողովածուի, որն ընդունված է անվանել Մաշտոց-Գանձարան:

Միաժամանակ, Մաշտոցների վերջում, ծիսական նույն նպատակով առանձին բաժնով բերվում են Ավերաբանների՝ Նարությանը վերաբերող հարվածները, ինչպես նաեւ ննջեցյալների շարականները:

Այս բոլորն ասվել եւ ընթերցվել են համապատասխան կանոնների կատարման ժամանակ:

Այս ավանդույթը փոխանցվել է նաեւ փաղգիր Մաշտոցներին, որոնց վերջում եւս, որպես Մաշտոցին կից ծիսական միավորներ բերվել են հիշյալ ավերաբանական հարվածները, գանձերը եւ փաղերը: Այսպես, 1704 թ. Կ. Պոլսում հրատարակված Մաշտոցում Քահանայաթաղի կանոնից առաջ բերվում է «Շարական ննջեցեցեց» ծավալուն բաժինը³⁷: Այս Մաշտոցի երկրորդ հրատարակությունում եւս բերված են բժշկության ավերաբանական հարվածները եւ Ննջեցեցեց շարականները³⁸: 1726 թ. նույն փաղարանում հրատարակված հաջորդ բաժնում ննջեցյալների համար ասվող միավորների բաժինը ավելի է մեծացվել եւ ընդգրկում է հետևյալ բաժինները. «Անբիծք ննջեցեցեց», «Շարականք հանգստեան», ի հավերժն ռախող երկու հրատարակությունների բերվում է եւ Առաքել Սյունեցու «Գանձ համօրէն ննջեցեցեց» գանձը եւ այս շարքը եզրափակվում է Բժշկության Ավերաբաններով³⁹: 1785 թ. դարձյալ Կ. Պոլսում հրատարակված Մաշտոցում մեծ փոփոխություններ կարգի հետ հարաբերվող գանձերին, փաղերին եւ ողբերին⁴⁰:

Այս ավանդույթը պահելով իր կենսունակությունը, շարունակվում է հասնում է մինչև

37 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1704, էջ 272-347:

38 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1714, էջ ԲԾԾԳ-ԳԾԽ:

39 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1726, էջ ՄԼԱ-ՅՆԵ:

40 «Մաշտոց», Կ. Պոլիս, 1785, էջ 302-351:

նոր շրջանի Մաշտոցները, ուր պարպադիր գեղեղված են Բժշկության և հանգստյան ավերարանները, ինչպես նաև Ննջեցեց շարականները:

Ոսկանն, ինչպես արդեն ասացինք, բժշկության ավերարանները, ննջեցյալների շարականները և ծիսական գանձերը ոչ միայն գեղեղել է Էջի վերջում, այլև դրանք սկսել էջահամարների նոր թվագրությամբ՝ 1-68:

Ոսկան Երեսանցու մյուս հրապարակությունների նման, այս Մաշտոցը եւս դիմացավ ժամանակի քննությանը, որի լավագույն հավաստումն է Նակոր Դ Ջողայեցու կողմից Սահակ եպիսկոպոսի՝ Ոսկանին ուղղված 1673 թ. թվակիր նամակը: Այս նամակում Սահակ Սրբազանը Նայոց Նայրապետի կողմից իր գնահատանքը հայտնելով ծանր գոհողությունների գնով իրականացրած փախուստների համար, միաժամանակ ասում է, որ ձեռագիր մի Մաշտոց է ուղարկում Վեհափառի կողմից, որ Ոսկանը այն հրապարակի⁴¹:

Ոսկան Երեսանցու հանդեպ Մայր Աթոռի բացառիկ վստահությունը հավաստվում է այն հանգամանքով, որ Սահակ Սրբազանը Նակոր Կաթողիկոսի կողմից ասում է, թե Վեհափառը նրան իրավունք է վերապահել, որ իր հայեցողությամբ համապատասխան կրճատումներ և խմբագրումներ կատարի այդ «Մաշտոցի» կանոններում:

Ահա այսպես, Նայ Եկեղեցու ծիսական գլխավոր գիրքը՝ Մեծ Մաշտոցը, Նակոր Ջողայեցի Կաթողիկոսը վստահում է իրականացնել հայկական փախուստի այդ բացառիկորեն մեծ և անձնագույն նվիրյալ մշակին:

Ոսկան վարդապետը վստահաբար կիրականացնել է այս հրապարակությունը Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անունը կրող փախուստում՝ համահունչ և արժանի ազգային-եկեղեցական մեր ավանդներին, եթե վերահաս մահը, մինչ այս նամակի փեղ հասնելը, հաջորդ փախուստ՝ 1674 թ. չկրքեր նրա արդյունաշատ, բայց և փառապալից կյանքի թելը:

41 Կարապետ Եպս. Ամարունի, Ոսկան վրդ. Երեսանցի և իր ժամանակը, Ս. Ղազար, 1975, էջ 335-337: